Սարավան

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Ռազմիկ Մանուկյան

Հեռ. +37494010243

Սարավան գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում, Դարբ գետի ափին, հեռավորությունը մարզկենտրոն Եղեգնաձորից 35 կմ է, Վայք քաղաքից՝ 18 կմ: Գտնվում է ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա: Սահմանակից է Վայոց ձորի մարզի Արտավան, Գնդեվազ և Սյունիքի մարզի Գորայք գյուղերին:

Սարավանը վերաբնակեցվել է 1988թ-ին: Նախկինում՝ 781թ-ին Սարավան գյուղի տարածքում է գտնվել Թերփ բնակավայրը: Գյուղի տարածքում կան հին խաչքարեր և գերեզմանաքարեր: 1988թ-ից գյուղը բնակեցվել է երիտասարդ ընտանիքներով: Այն կազմված է երեք բնակավայրերից՝ Սարավան, Սարալանջ և Ուղեձոր:

Սարավանը լեռնային գյուղ է, շրջափակված է գեղեցիկ անտառներով: Բնակավայրի տարածքով է անցնում Երևան-Մեղրի միջպետական մայրուղին, որի աջ և ձախ կողմերում են գտնվում Սարավան և Սարալանջ գյուղերը:

Բնակչության մեծ մասն զբաղվում է անասնապահությամբ, գյուղում հիմնվել են նոր այգիներ:

Գործում է դպրոց և բուժկետ:

Սարավանում կան XVII դարի ավերակ եկեղեցի, XIII դարի աղբյուր-հուշարձան, 4-5 կմ հարավ-արևմուտքում՝ XIV-XIX դարերի մատուռ և XI-XVII դարերի խաչքարեր:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Սարավան գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է ընդամենը 4 հուշարձան: